# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N 153-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգքրի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 11112024-06-0049, N 25112024-06-0033 վկայականները, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 53/5 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0084-0061 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.04836 հեկտար մակերեսով հողամասը, հասարակական կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Աքորի գյուղի վարչական սահմանում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-022-0101-0161 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի 0.2 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 495 000 (չորս հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի

չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

3. Հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
5. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 11. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 12. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 14. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ